

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին Կ. Պօլսոյ հմր 8 Մէճ.
» Գաւառաց » 10 Մէճ.
» Կիցամեայ Կ. Պօլսոյ » 4 Մէճ.
» Գաւառաց » 5 Մէճ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փրյ.
յանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար զատ սահարկութիւն կը լայն:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 23 ՄԱՅԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հեռագիրն անցեալ շաբթու ըրը
բերած էր թէ Պ. Թիէր՝ Գաղղիոյ
Ժիրօնոս դաւառին կողմէ պատգա-
մաւորութիւն մ'ընդունելով բանա-
խօսութիւն մ'ըրեր է, որոյ մէջ աղ-
գային ժողովոյ լուծման հարկը կը
ցուցնէ:

Շաբթու հասած Գաղղիական լը-
րագրերն յիշեալ պատգամաւորու-
թեան նպատակն և Պ. Թիէրի բա-
նախօսութեան պատճէնը կը բերեն:

Ժիրօնոսի բնակիչները Պ. Թիէրի
մատուցած հայրենասիրական ծառա-
յութեանց փոխարէն յատուկ շքա-
գլորամ մ'ը շնորհակալեաց ուղերձ
մը զրկած էին անոր՝ պատգամաւո-
րութեան մը ձեռօք:

Պ. Թիէր շքադրամն և ուղերձն
ընդունելով հետեւեալ նշանակու-
թեան արժանի խօսքերն ըստ.

«Տեա՛րք.

«Շնորհակալ եմ ձեր հոս ներ-
կայութենէն, ձեր ինձ բերած այդ-
դեղեցիկ ընծայէն, և մանաւանդ
բերած զգացումներէն: Այդ զգաց-
մանց կուգէին կատարելապէս արժա-
նի ըլլալ. կը կարծեմ սակայն, որ մէկ
մասին արժանացած եմ իմ անձնուի-
րութեամբ, և շատ ուրախ եմ որ
կրնամ այս փառահալութեամբ խօսիլ
ձեր առջև, երեսփոխանք. Ժիրօն-
ոսի, որոց մէջ ընդունեցի իշխանու-
թիւնը, և որոց առջև անոր առա-
ջին գործածութիւնն ըրի: Կը սիրեմ
ձեզ վկայ բռնել, և բարեբաղդ կը
համարեմ զիս որ մայիսի այս 24 եր-
րորդ օրը ձեզ դատաւոր ունիմ:

«Արդարեւ երբ ասկէց տարի մ'ա-
ռաւ ազգային ժողովն իւր իրաւուն-
քը գործածելով ինձմէ կը բաժնուէր,
երկրին հանդարտութիւնը, բարե-
կարգութեան վերահաստատութիւնը,
փարկին յանկարծ բարձրանալը, եւ
իմ ու պատուարժան պաշտօնակցա-
ցըս ջանքը Գաղղիոյ հողին աղատու-
թիւնը տեսնողը՝ չէր կրնար ըսել թէ
ինձ յանձնուած իշխանութիւնը չա-
րապար գործածեր էի: Բայց մէկ բա-
նի մի համար կը մեղադրէին զիս, այ-
սինքն թէ չէի կրցեր կամ չէի ուզեր
երկրը միապետութեան ճանքու մէջ
դնել:

«Արդ, Տեա՛րք իմ, դուք ամեն
բան տեսաք, և կը հարցնեմ ձեզ
թէ, ի Պօլսոս, ձեր այդ ազնիւ քա-
ղաքին մէջ, որ այն ժամանակ խիստ
ողեւաւաւ էր, հարաւային ժողո-
ղովրդոց առջև՝ որք հանրապետու-
թեան համար դաշնակցած էին, փա-
րեղի առջև որ սպաստամբելու պատ-
րաստ էր և խիստ մեծ զօրութիւն
ունէր իր ձեռքը, կրնայինք միապե-
տութիւն հրատարակել:

«Մեք իսկ կրնայինք կառավա-
րութիւնը ձեռունքին առնուլ և ժո-
ղովին իշխանութիւնը ճանչցնել՝ եթէ
ժանուցանէինք թէ հանրապետու-
թիւնը ջնջելու եկած էր: Ասկէց զատ
առաջարկող մ'ալ եղա՞ւ այն ժամա-
նակ: Անշուշտ ես քանի մը պատ-
ւարժան երեսփոխաններ տեսայ որ
ցաւ կը յայտնէին թէ միապետու-
թիւն հրատարակելը հնարաւոր չէր.
բայց մէկը չտեսայ որ առաջարկէր:

«Եւ ամիս մ'ետքը՝ երբոր փարի-
զի դռներն հասնելով, զոր անիշխա-
նութեան ձեռքէն կորչել հարկ էր,

պարտաւորուած էինք յանուն աղ-
գային ժողովոյ յայտարարել թէ մեք
ոչ թէ միապետութեան այլ վտանգ-
եալ ընկերական կարգին համար կը
մարտնչէինք, կրնայինք մէկէն ի մէկ
միապետութիւն հրատարակել: Եւ
եթէ վտանգին առջև չէինք համար-
ձակեր, կրնայինք՝ զմեզ անպատկա-

ռարար սուտ հանելով՝ առջի օրը ծա-
նուցածնու հակառակն ընել հետե-
ւալ օրը: Մէկը համարձակեցա՞ւ ա-
ռաջարկել եւ ամիս մ'ետքը, երբոր
մեր հանապազօրեայ հացը Պանքա-
յէն խնդրելու հարկադրեալ էինք,

երբոր Բուսիայիցները փարիզէն քա-
նի մը փառսախ միայն հեռացնելու
համար 500 միլիոնի ամբողջ դունար
մը դրոշմ հարկ էր, միթէ հանրա-
պետութիւնը ջնջելով և երկրին մէջ
սրտայուզութիւն պատճառելով կըր-
նայինք ձեռք բերել այն երկամեայ
հանդարտութիւնն, որ թող տուաւ

մեզ ահագին փոխառութիւններ ը-
նել երկրին հողը դաւառ առ դաւառ
դնել, և Գաղղիոյ անհուն հարստու-
թիւնն յանկարծ յայտնելով՝ զինքն
ամեն ազգաց յարգելի ընել: Մեք՝
հանրապետութեամբ, անոր անունով,
անոր անկեղծ ընդունելութեան ժո-
ղովրդոց մէջ դոյցացած անդորրամի-
տութեամբ միայն կրցինք ձեռք բը-
րել այն երկամեայ անյուսալի հան-
դարտութիւնն և այդ իրողութիւն-
ները՝ զորս այսօր այդչափ պատուա-
ւոր կերպիւ կը յիշէք: Եւ այդ ի-
րողութեանց մէջ, ուր թերեւ գոր-
ծաբութեան արժանիք մ'ալ կը մըլտ-

նէր, դիտե՛ք, ո՞րն եղաւ իմ և պաշ-
տօնակցացս ճշմարիտ արժանիքը:
Երկրին վիճակին վրայ յատուկ տե-
սութիւն մ'ունենալ. հասկնալ թէ
երկրին ներկայ վիճակին մէջ կառա-
վարութեան միակ հնարաւոր ձեւը
հանրապետութիւնն էր: Այս է այն
բանաւոր գործը՝ որոյ վրայ կը խօ-
սէի ասկէ քանի մը շաբաթ առաջ,
և զոր պէտքէ՛ւ կատարել եթէ կուզ-
էի որ երկրին սպառնութիւն դըր-
նէ, և սպառնութեան հետ աշխա-
տութեան փութաշտնութիւն և գոր-
ծի աշխոյժ՝ վերջին անգամն այս ը-
սած իմ մեծանկատարեալ ապացոյց էն:

«Ինձ յաջորդող մարդիկն, որք

միապետութիւն հաստատելու հա-
մար յաջորդեցին, վասն զի ես չէի
հաստատել, կրցինք ընել: Զայն պատ-
րաստելու և տարու համար ամբողջ
տարի մը ժամանակ ունեցան, նիւ-
թական զօրութիւն ունեցան, աղգա-
յին ժողովոյ իշխանութիւնն իրենց
հետ ունեցան, առանց ակնածու-
թեան գործածուած իշխանութիւն
ունեցան, կրցինք միապետութիւնը
վերահաստատել: Անշուշտ չկրնար
մէկն ըսել թէ չէին ուզեր. և եթէ
ուզելով հանդերձ չըրին, յայտնի է
որ չէին կրնար ընել:

«Բուսի թերեւ թէ կուսակցու-
թիւններն արդէք եղան: Բայց այդ
կուսակցութիւններն՝ ինչպէս առ-
ջի օրը դուռն, նոյնպէս և հետեւեալ
օրը պիտի դռնէին իրենց առջև:
Եւ ի՞նչ են այդ կուսակցութիւնք:
Ժողովրդեան բազմութիւնքն են,
որք սերտիւ կապուած են հանրա-
պետական ձեւին. միապետական կու-
սակցութիւնք են՝ որք միապետու-
թիւն կուզեն, բայց ամեն ալ միւս-
նոյն միապետութիւնը չեն ուզեր, և
միշտ պատրաստ են երեք միապե-
տութեանց մէջէն նախապատել ընտ-
րուածին դէմ միաբանելու:

«Այս է, Տեա՛րք, մայիս 24 թը-
ւականէն հանելիք խրատնիս. մար-
դիկը համապատենք, ամբաստա-
նելով չգրգռենք, և վերջին անգամ
ըսեն մէջ՝ ոչ թէ ամբաստանութեան
առիթմ՝ այլ խրատ փնտռենք:

«Խրատն այս է: Այն մարդիկն,
որ զիս կամբաստանեն թէ Գաղղիոյ
միապետութիւն չտուի, մէկ տարի
ամբողջ երկրին իշխանութիւնը, նիւ-
թական զօրութիւնը, և ժողովին մի-
ապետական մեծամասնութիւնն իրենց
ձեռքն ունեցան և միապետութիւ-
նը չ'վերահաստատեցին, այս միակ
պատճառաւ որ չէին կրնար: Այս դա-
սէն երկիրն օգուտ քաղեց, և օգուտ
քաղած ըլլալն ամեն անգամ երեսփո-
խան մ'ընտրած ժամանակ զարմանա-
լի հաստատանութեամբ կը ցուցնէ:

Հասկցաւ որ քաղաքային պատերազմ
չունենալու, հանդարտութեան ար-
դիւնաւոր աշխատութեան հասնելու
համար՝ պէտք է ընդունիլ այն կա-
ռավարութիւնն, որ ամեն կուսակ-
ցութիւնները մէկի պիտի վերածէ,
ամեն բարի քաղաքացեաց ընդհան-
րութիւնէն բաղկացեալ, ինչ որ ալ
ըլլայ անոց ծագումն ու կարծիքը,
առ ի վերակազմել զԳաղղիա և լա-
ւաւորն սպառնայ մ'առաջնորդել:

«Այն կառավարութիւնը՝ պահ-
պանողական հանրապետութեան ու-
րելը չէ և չկրնար ըլլալ: Եթէ այսօր
ազգային ժողովին մէջ այնչափ դժ-
ւարութիւններ կը տեսնուին այնպի-
սի նախարարութիւն մը կազմելու որ
մեծամասնութիւն ստանայ, պատ-
ճառն այն է որ իմ ցոյց տուած ճըշ-

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս գացած լրագրաց ճանրու
ծախքը խմբագրութեան վրայ է:
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ եւ իցէ գրութիւն խմբագիր
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պո-
լիս, Զինիլի խան, Մաթիսի գրասեն-
եակը:
Համար ծախքը չ'վճարուած նա-
մակ չ'ընդունուիր:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒԻՐԵՐ

Փարիզ 1 յունիս.

Պ. Մայն պիտի խնդրէ ժողովէն
որ հարկաց առաջարկեալ օրինաց վը-
րայ վիճաբանութիւնն անմիջապէս
սկսի:

Պէրլին 1 յունիս.

Պատերազմի ժամանակ ազգաց
իրաւունքը կանոնադրելու համար
առաջարկուած դեպքանախօսողը յու-
լիս 27ին Պրիւսիա պիտի դուռնարի Կոր-
չաքոֆ իշխանին պատրաստած յոյ-
տադրին համաձայն: Բոլոր Եւրոպա-
կան կառավարութիւնը իրենց կող-

մէ փոխանորդներ զրկելու հրաւերն ընդունեցին :

Նիւ Խորք 1 յունիս.
Պ. Ռօշֆօր նամակ մը հրատարակեց, որոյ մէջ փարիզի հասարակութիւնը (քօմիտէ) արդարացեալ կը ջանայ Վիեննա 1 յունիս :

Քաղաքի փառանք Բ. Դրան հրամանաւ առժամանակեայ կերպիւ Կ. Պօլիս երթալու գլխաւորութիւնը փոխադրուց, և ամսոյս 7 ին հաւանակներու քանակը պիտի ելնէ :

Օսմանեան գանձարկին վրայ փարիզէն եկած լուրերը գոհացուցիչ են : 1864ի փոխառութեան բաժիններու ընդհանուր արժեքը 1378 սէրիին 94 թիւն առաջին վիճակը շահեցաւ, և 2226 սէրիին 47 թիւն ալ երկրորդ վիճակը :

Փարիզ 1 յունիս.
Պաշտօնագրոյն հակառակ Պ. Մայն երկուսից նախարար կը մնայ : Նոր նախարարութիւնը չէզոք գիւրք մը բռնած է կուսակցութեանց նկատմամբ : Բայց Պոստարքութեան կուսակցութիւնը կը յաւանջանայ :

Վիեննա 2 յունիս.
Փարիզէն Գերմանական Նոսովէլ Բուէս Լիպը լրագրին ուղղուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Նաբօլէան Գ. ի որդին՝ Մարք—Մահօն մահաւորաբար աղկան հետ պիտի ամուսնանայ :

Վերսալ 2 յունիս.
Թաղապետական խորհրդոց վերաբերեալ օրէնքն երկրորդ վիճաբանութենէ մ'ետեւ՝ 298 ի դէմ 394 ձայնով ընդունուեցաւ : Թաղապետներն ու գեղապետները կառավարութեան կողմէ պիտի ընտրուին :

Փարիզ 2 յունիս.
Կը հաւատան թէ ազգային ժողովոյ ալ կեդրոնը՝ միապետութեան վերահաստատութենէն յոյսը կը տրեւոյ հանրապետութիւնն ընդունելու որոշում ըրեր է :

Լոնտրա 1 յունիս.
Ամբիւրջ անուն նաւը Մէլպուրնի մօտ պեկոնութեան բռնուելով ցաւ մահ ինկաւ և 79 հոգի կեանքերուն կորուսին :

Մատրիս 1 յունիս.
Ապստամբութիւն մ'ելաւ քաղաքիս մէջ :

Աթէնք 1 յունիս.
Շաբաթ օրը երեք յիսնապետ ըսպանութեան փորձ մ'ըրին Պ. Սթրաթիքօքուլօ անուն գրադէտին վրայ, որ իր գրուածոց մէջ Պ. Կրիվան ի գալեր էր :

Պ. Սթրաթիքօքուլօ ծանրապէս վերաւորեցաւ :

Լոնտրա 2 յունիս.
Թայմզ լրագիրն իր կալիպայի թղթակցէն առած հեռագիր մը կը հրատարակէ ծանուցանող թէ Չինաց զորքերը Քաշկարի Լիմընին հոյն արշաւներ են : Ռուսիա՝ պաշտպանողական միջոցներ ձեռք առնելու համար կը բանակել լիմընին հետ :

Փարիզ 2 յունիս.
Ազգային ժողովոյ մէջ ձախակողմեանք ընտրական օրինաց ծրագիրն էտ ձգելու առաջարկեցին, բայց ժողովին մեծամասնութիւնը չընդունեց այս առաջարկութիւնը :

Սոփիէի ջրանցքին բաժանորդաց ընդհ. ժողովն այսօր գումարուելով, որոշեց 440000 նոր բաժին հանել 84 ֆրանքսոյ, և անոնցմով վճարել էտ մնացած 6 կտրօններն և յառաջիկայ կարծել :

Ժողովը նաւաչափի խնդրոյն մէջ ընկերութեան նախագահ Պ. Տը Լէսնէրի բռնած ընթացքին հաւանութիւնը ընկերութեան իրաւունքը պաշտպանելու համար լիազոր իշխանութիւն տուաւ անոր և վարչութեան :

Լոնտրա 2 յունիս.
Փոք. Բօն. 47 1/2
Ֆոխ. 1865 —
» 1869 54 3 4
» 1871 64 3/4
» 1872 82 1/4
Անգլ. Բօն. 92 3/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Ծովային գործոց նախարար Վլադիմիր Ալեքսանդրովիչ Գաբրիել Գաբրիել

յի (գերագոյն ծովապետի) ակտիւս օրհանգիստ :

Այս ակտիւսն և ասոր յարակից արտօնութիւնները Մէհմէտ Ալի փաշայի վախճանումէն ետեւ վերցած էին :

Երբեմն փարիզի բրուսիական գեղարվեստ Պ. Վէրմէլէ Բ. Դրան քով Գերմանիոյ կայսրութեան գեղարվեստ անուանեցաւ :

Գաղափարի կործանումը գուշակաւ հրեային համար կըսուի թէ ուսանողութեան կողմէ փնտռուելով բռնուելու ու բանալու գրուել է :

Սուտ մարդարէն՝ Գաղափարի կործանումը գուշակած ժամանակ չէր կրցած իր բանալու գրուելն ալ գուշակել :

Ջարմանալին սա է որ այս տեսակ անտեղի գուշակութեան մը հաւատացող պարզամտներ պակաս չեն Գաղափարի Հայ և Յոյն բնակչաց մէջ, և արդէն՝ լսածնուս նայելով քանի մ'ընտանիք մեկներ են յիշեալ գեղէն :

Երեքշաբթի տառուտ Եփեսոսի հրդեհ պատահելով երեք տուն այրեցաւ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԵՍԶԱՄԵՆ ՈՒՄՈՒՄԻԵ

22 մայիս. չորեքշաբթի իրիկուն 53.30
23 » հինգշաբթի առաւօտ 54 10
» Կէս օր 54 12

Կ. Պօլիս 22 մայիս.
Սօսիթէթ ժէնէրալի բաժինը Անգ. իր. 6.36
« փոխանակութեան » 4 32
Կ. Պօլիս Գանձարկ » 4.30
Քրէտի ժէնէրալ » 9.25
Քրէտի Սօսիթէթ-Թիւրք » —

Երկրորդ ժէնէրալ հին 3ր. 413 1/2
» 88
» 333
» 336
» 273
» 83

Փոխ. 1873 —
Թրամուէյ Օսմ. իր 5.40

ԸՆԹԱՅՔ ԳՐԱՄՈՑ
22 ՄԱՅԻՍ

Անգլ. Բօն. 44.
Նաբ. առաւ. » 88
Իմպերալ Ռուս. » 90 10
Գրքերից » 51. 20
Հինգ Գրք. » —
Հինգնոց » 405 10
Պրինց » 424 20

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՈՒՍՈՒՑԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Կրթութեան անհրաժեշտ պէտքը ճանչելու յառաջիկայութեան սկիզբն է. այս սկիզբը կայ մեր ազգին մէջ և օր քան զօր լինող հանրապետ. բայց բուն յառաջիկայութիւնը պէտքերն լրացման մէջ է :

Մարդու մ'իր անօթութիւնը կամ մերկութիւնն զգալը միայն բաւական չէ. պէտք եղած նպարներն ու հանգիւցներն ունենալն ալ բաւական չէ, այլ զանոնք պատրաստողներ ալ պէտք է ունենալ :

Մեր այսօրուան կրթական վիճակը ճշգրիտ այն անօթի կամ մերկ մարդուն վիճակն է, որ կ'զգայ իր անօթութիւնն ու մերկութիւնը, քիչ շատ նպար և հանգիւցներ չունի, բայց պատրաստող չունի :

Վարժարաններ ունինք, բայց դիտնական վարժապետներ և հմուտ կամ լուսավոր տեսուչներ չունինք, կամայնաւով քիչ ունինք, որ մեր պետոյից համեմատութեամբ հարկւրին մէկ ըսել չէ :

Այս է գլխաւոր պատճառը, կամ գլխաւոր պատճառներէն առաջինը, որ 30 տարիէ ի վեր վարժարանաց համար միլիոններ կը զոհուին ժողովրդեան կողմէ և գոհացուցիչ արդիւնք մը չտեսնուիր :

Ուսուցչական խնդիրը, որ կըրթութեան հոգին է, բոլորովին անտես եղած է, և այս անփութութիւնը քաղաք. դարէն աւելի ժամանակ և անհատական բերաւոր ապագայներ կորուսանել տուաւ մեզ, ապագայներ՝ որք խիստ պայծառ ու փառաւոր կրնային ըլլալ և ռազմին կեանք ու զօրութիւն պարգեւել :

Այս կենսական և անհրաժեշտ պէտքերն վրայ, որ ազգին ամեն մասերուն գաղափարայն զգալի եղած է, հետեւեալ յօդուածը կը կարգանք Տիմիտի Մշակ շարաթիւթերի մասին 9 թուոյն մէջ, ժընէվէն գրուած, ընտիր և զգալուն յօդուած մը, ամեն խոհուն ազգայնոց ընթերցմանն և մանաւանդ ուշադրութեանն արժանի :

Ես գրել էի «Մշակի» թէ Երուսաղէմի վանքը մտադիր է մի քանի հայկազն պատանիք առաքել Չուրիցեղի մանկավարժութիւն սովորել տալու համար, որպէս զի սոքա ուսման ընթացքն աւարտելուց յետոյ, կրթութեան առողջ գաղափարներ տարածեն փոքր Ասիոյ մէջ և օգնեն բարեկարգել այն տեղի ազգային դպրոցները : Ընդ նմին յիշած էի որ ազգապէր հայրիկն ևս նոյն խի ազնիւ ցանկութիւնն ունի, զոր նա մինչեւ այժման չուտ ի դրու չհանած կը լինէր, եթէ նիւթական հմար գտնէր :

Չգիտեմ, թէ արդեօք Կովկասի հայերն ևս այնպիսի դիտաւորութիւնը ունին, թէ ոչ. ինձ միայն քաջ յայտնի է լրագիրներից և մասնաւոր նամակներից, որ արդիւս բոլոր Կովկասի հայերի մէջ յերեւան ելող կրթութեան վերաբերեալ յայտնեցնելու ձեռնհաս դատարարներ չկան մեղաւորութիւն ամեն տեղ կրթութեան քաղցր արդիւնքների յուսով վարժարաններ հիմնելու և սոցա համար մեծագլխի գումարներ զոհելու վրա է. սակայն գումարները կորչում են, յոյսերը չբանաւում և այս նորաչին հաստատութիւնները լոյս տեսնելու օրից սկսեալ ուրախութեան փոխարէն՝ դարձեալ ու բաւաւաճի* առիթ են տալիս ազգին. զի աստ վարժարան կայ, բայց վարժապետ չկայ, անդ վարժապետ անգոհ է ժողովրդից, միւս տեղ՝ ժողովրդից վարժապետից, որքե՛ն երկուքն էլ իրարեց, եւ աւանդայն տեղ Բարձրեան խառնակութիւն, ուր ամենից շատ տոռոնող հարկաւ մեր թշուառ մանկտին է :

Ազգային կրթութեան օգտին և անհրաժեշտ կարեւորութեան վրա երկրաշող անձինք, կարծեմ, է՛լ չկան մեր մէջ, և եթէ լինին՝ այսպիսիք մաքուր չեն, այլ բերաւոր տարիներից մնացեալ անկենդան մամուլներն են, որք այլ ևս բան չունին այս աշխարհում : Ամենքս էլ գիտենք որ եթէ մեզ կրթութիւն հարկաւոր է, թէ առանց կրթութեան այս դարու մըս ապրել անհնարին է, հաւաստի լինելով որ եթէ մեր բանն այսպէս շարունակուի իսպառ պիտի նուազանայ, կորչի իր օրը և մեր ազգի անունն անգամ քաւի ի տանք : Սակայն գիտնալն ու հաւատալը դեռ քիչ է—հաւատքը մեռաւ են առանց գործոց, պէտք է նաև գործ տեսնել :

Միթէ գործ չենք տեսնում կարող են ստեղծում, մեր նորաչին վարժարանները վրա մատնացող լինելով : Արդարեւ այս վարժարանների թիւն ազգի թւոյն և նիւթական վիճակի հետ համեմատելով՝ բաւականին մեծ է. բայց նոքա մութ հիմուն վրայ շինուած, բարեկարգ, տեսական և արդիւնաւէտ կենդանութեան երաշխիք տուող հաստատութիւն չեն : Ուսումնարանների չէնք հիմնել զբժար բան չէ. այսպիսի չէնք կային (ո՛ւր է արդեօք Խալիպան դպրոց) և կիներն և ազգի լուսաւորութիւնը դարձեալ մաս զի չափ չի շահալի նոցանից, Լաւ է որ մեր արդի լուսաւորչները հոյաւոր պատանիք չինելու տեղ՝ նախ վարժապետներ պատրաստելու փոքր տանին, որք ընդունակ լինին կեանք և հոգի չնորհելու այս տներին : Փառաւորե՛ք մարդիկ ու

* Տէրտ ու պէլիս :

ընդ կամենում են որ ի ձայն փողոյ, սըւրընդի, տաւղի և նուագարանաց ամեն ուրեք հոշակութիւն աւստիկ նոքա հիմնեցին այս ինչ վարժարանը, և չեն ուսուցում ըմբռնել, որ վարժարանը լոկ պառտեղով վարժարան չէ լինում, այլ գիտնական ու հմուտ վարժապետներով, լուսաւորեալ և ազգասէր տեսուչներով Պաշտոններ հիմնող Մարկոսներ ու Թորոսներ բաւականին տեսանք, այլ օգուտ դեռ չպիտի տեսնենք, և այս նոր պաշտոնների վրա դորձադրեալ գումարները նոյնպէս ապարդիւն պիտի կորչին, ինչպէս որ արդէն շատ անգամ կորած են Մարկոսեան ընդհանուր փողովքի խնդհ հայերի ամբողջ քաղաքով ձեռք բերուած անթիւ հազարները :

Որպէս այս փառատենչ անհատներն նման ժողովուրդն էլ երբեմն սիրում է երեւակայել, որ վարժարանի նիւթական որմերը չինելով՝ արդէն կհասնի իւր տեսնալի նպատակին և խիղի վարժ ու կիրթ որդիք կունենայ. միայն ամսո՛ս որ այս երեւակայութիւնը խաբուսիկ է. և կրթութեան գործը շատ դժուար բան է մեր դարում, և զայն ժամանակիս բերաւոր պիտոյցների համեմատ յառաջ տանելու համար յատկապէս առայս պատրաստեալ մարդիկ հարկաւոր են : Մենք միւս պատրաստ ենք որդիական չենք նորահայտութեամբ յիշելու մեր հին վարժապետների, տիրացուների և ժամկոչների բարի ջանքը. նոքա արին ինչ որ կարող էին անել մեր ազգին թշուառութեան խաւարչտին օրերում և թերեւս լաւ էին մեր լուսահոգի պապերի ժամանակ, երբ ոչ եւ լեքարական դժուր կային և ոչ երկաթուղիներ, բայց այժմուս էլ չեն սիրտանի : Հայերը թող բնաւ չկարծեն, որ ազգային դպրոցների համար այս հին կարգի վարժապետներն էլ բաւական են մեզ : Եթէ մեր ազգը գէթ մի անգամ տեսնէր, թէ ինչ մեծ կարեւորութիւն են տալիս, օրինակի համար, Գերմանացիք ու Չուրիցեղացիք փոքրիկ մոնիկուոյ դաստիարակութեանը և թէ ինչ կերպիւ հազարգումում կրթութիւնը այս փոքրիկներին, այնուհետեւ վերահասու կլինէր, որ յատկապէս սկզբնական վարժարանների համար առաւել մեծ աշխատութիւն տուրուէր թիւն, ջանք, փող և առաւել բազմադիմի հիմնութիւն և փորձ պահանջում է վարժապետից՝ քան թէ վերին կարգի ուսումնարաններում :

Վասնորոյ հարկ է վերջապէս, որ մեր ազգի ճշմարիտ լուսաւորութեան սիրտակոր հայերը վարժարանների թիւն աւելցնելուց առաջ, և կամ գէթ մի և նոյն ժամանակի փողով տանեն, նաև քաջուս դաստիարակներ պատրաստելու, եթէ կամենում են որ ազգի դրամական զոհուցութիւնը իրօք չահ բերեն և նորա պայծառ անկախութիւնը ստուգիւ արւուն և մարմին ստանան մեծաւոր ապագա յում :

Ժամանակը չէ ներում և սէտք էլ չէ յուսալ, որ այսպիսի դաստիարակներ մի օր ինքն ըստ ինքեան կրաղմանան մեր մէջ : Հայոց ազգի կրթութեան պիտոյքը ստիպողական անհրաժեշտ և անչափ են ազգային լուսաւորութեան դաշտի վրա, որ այժմ կիզիլ արեւից խորակեալ սգաւոր անապատ է ներկայացնում, մշակներ ընդ սակաւ են, և մեզ ներքին չէ անհոգ նստած սպասել որ նոքա ինքեանք քան առ մեզ այլ պէտք է այժմ իսկ առանց վայրկեան մի վատնելու՝ պատրաստել այս մշակները, այսինքն խիղի դրամ հաւաքել և արթուն ու ժիւր պատանիք առաւել ո՛ւր որ անի է, որպէս զի կրթութիւն ու հրահանգութիւն, և մի օր պնդութեամբ դուռնորեալ այս անհոգ դաշտերի վրա ակօս բանալով բեկանելով կրկին ի բաւրելի ու գուարթ առատութիւն վերածեն զնոսա :

Համալսարանի մէջ ուսում աւարտող հայ երիտասարդները սովորութիւն չունին ազգային վարժապետ դառնալու և Ռմանը կամաւ խորշում են այս պաշտօնից, զի ազգային վարժապետի համեստ շաւղի վրայ վարդեր չեն բուսնում : Այլք անտես են թողնում զայն, զի բժշկութիւն ընտրած են, երրորդ՝ զի ինժեներ լինելն աւելի դիւրին է. չորրորդ՝ զի հա-

բուստ են: Հինգերորդը՝ զի չքաւոր են, վե-
ցերորդը՝ սոցա թիւն է լեզիոնը՝ զի
խալաւ հայերէն չգիտեն և հայութեան
վրա նոյնքան են մտածում, որքան որ
հաջի մասնա շինութեան վրա: Եթէ հար-
ցընես այս տեսակի ուսանողները, թէ
չայն ո՞վ էր, կ'արծէ թերեւս որ սա ու-
տեւու բան էր: Բայտի բերամար գուցէ
սոքա էլ մի օր հայերէն կուսանեն և ազ-
գային դաստիարակութեան ասպարիզի
վրա միայն հանդիսանալու փախաք կու-
նենան, որ ամեն մի ճամբարի կրթութեան
ազնիւ մարդը սուրբ պարտաւորութիւնն
է. սակայն այսօրվոյ յոսոյ վրա ասուի-
նելով՝ այժմուս մեր անհրաժեշտ պիտոյքն
մտանալը սարսափելի յանցանք կը լինի
յանցանք՝ զոր դառն արտասուք տուե-
լու ենք յետոյ և տուեալու են մեր յա-
ջորդները՝ նոյնը կարողալով մեր գլխին:
Ազգի մը գրամական օգնութեամբ
մանկավարժութեան ազգայնէ գործի հա-
մար կանխաւ պատրաստութեամբ մարդիկ
չեն փախչիր ազգային գործունէութեան
դաշտից և դայն չեն արհամարհեր, ինչ-
պէս որ անուս են մեր պատուելի ուսա-
նողներն ի յաւիտեանական ամբի իւրեանց
այլ իրիւ արդի լուսաւորութեան դասե-
րըն ըմբռնելու ընդունակ խաղաղ ուս-
եալ, ժիր և կենդանի անձինք, բոլորով
սրտիւ դայն կըրնան և դերադոյն պա-
տիւ կը համարեն՝ ըստ յայտոյ կարողու-
թեան ծառայելու մի խեղճ ազգի որ միւս
ազգերից աւելի կարօտ է իւր բոլոր դա-
ւադներին հաւատարմօ օգնութեանը:
6 մարտի 1874 Փ. Վարդանեան:

ԱՂԵՏԱԼԻ ԳՈՅԺ ՄԸ

Ներկայ 1874 թուականը չարաշը-
շուկ տարի մ'եղաւ: Թուրքիոյ ասիա-
կան գաւառաց համար: Տարօրինակ
ձմեռ մը, կենդանաց կոտորած,
սով և գետնաշարժ իրենց բոլոր ա-
ղետալի հետեւանքներով ծանրացած
են գաւառաց ոմանց վրայ:

Հետեւեալ նամակը որ խորհրդ-
դէն դուռած է, սարսափելի գետնա-
շարժի մը նկարագիր է, որ քանի մը
գիւղեր կործանած, բազմաթիւ հո-
գիններ վրատակներու ներքե թա-
ղած և հազարաւորներ ալ յետին
թշուառութեան մէջ ձգած է:

Խմբագրապետ Տէր.

Արտասուալից աչօք կը գրեմ հե-
տեւեալ սրտաշարժ տողերը ըստ ան-
հրաժեշտ խոստմանս:

Երկրաշարժը գեռ կը շարունակէ:
Խորհրդաւ լայնածաւալ և բա-
րեբեր գաւառի գիւղօրէից մեծագոյն
մասը փլած և աւերած է . . . :

Ապրիլ 21 կիրակէ առաւօտուն,
մինչդեռ ամենայն չայ կողմէր յե-
կեղեցւոյ, այնպիսի ահաբեկ ուժգ-
նութեամբ շարժեցաւ երկիրը, որ
քաղաքն ու գաւառը ունեւորին նաւա-
կի մը կամ հողմանիծ թեթեւ տերե-
ւիկի մը նման տատանեցան ու տա-
րուբերեցան:

Ասիէ վեց ժամ հեռաւորութեամբ
Հապուսի գիւղը, որ 250 չայ տունե-
րէ կը բաղկանար, հիմնովին կործա-
նեցաւ . . . ամպանքման փոշին քա-
ղաքէն կը տեսնուէր իւրեւ ի մօտոյ:
Քսան մարդ վրատակաց ներքե
մեռած և 30 մարդ ծանրապէս վի-
րաւորուած են:

Թշուառ գիւղացիք ոչ հաց ու-
նին ուտելու, ոչ հանգերձ ունին
հագնելու և ոչ անկողին պառկելու:

Աւերակները ծածկած են դանտը:
Եւ կիսափուլ պատերուն ներքե
անախկալ մահուան երկիւղը չը թո-
ղուր որ դանտը (ուտելիք, հագնե-
լիք և այլն) հանելով իրենց անհրա-
ժեշտ պիտոյքը հողան:

Շախչաւար, Ախու, Մուղուրդ-
լու, Ալիւամ և Ալընի գիւղերը ա-
ւերեցան. մեռեալք և վիրաւորք
սակաւաթիւ են: Իլմէ, Չարդարիչ,

Սարքըլի, Եէնիճէ և Մորինիկ կիս-
ովն փլան, կանգուն մնացածներուն
մէջ բնակիլ անկարելի է: Ողորմելի
գիւղականք անպատապար մնալով,
դերեղմաններն ու աղբանոցները ի-
րենց սոգհոյ բնակատեղիքը քաժ են:

Այն օր Հոգէի նորաշէն եկեղեցւոյ
օծման տուրը հանգէսը կը կատարէ-
ինք. հազիւ լինցած էր օծումը՝ երբ
ահարկու շարժը սկսաւ: Հանգիսա-
կանաց բազմութիւնը սարսափելի ա-
ղաղակներով զիրար կը կոխտէր, և
հոսանքի պէս դուրս խուժելով ի
տես բնտանեաց կընթանայր:

Եկեղեցին և գիւղը փլատուեցաւ,
և Աստուած մի արասցէ, եթէ վե-
րախին անանի ուժգին շարժ մը պա-
տահի, կանգուն գիւղ մը, տուն մը և
հիւղակ մը անգամ չպիտի գտնուի:

Տէր, երեւակայեցէք նորածին
մատղաշ մանուկներ, որք իրենց ծը-
նողաց գիրկն ինկած արտասուք և
թախանձալից աչօք հայ խնդրեն և
ո՛հ, կը սոսկամ ըսելու, չքաւոր ծը-
նողք կը զլանան . . . :

Յորենին գինը բարձրանալ սկը-
սած է. մօտաւորաւ սովի մը երկիւղը
երկրաշարժին արհաւիրաց հետ միա-
նալով գառն մոտանալնութեան մէջ
ձգած է զխորհրդօքսի:

Տիգրանակերտի վսեմ. կուսակա-
լըն այս չարագուշակ աղէտները լու-
րով անձամբ հոս եկաւ:

Յուսալից եմք թէ Նորին վսեմու-
թիւնը առատարտութեամբ կը բա-
րեբարէ զանօգնական թշուառաց-
եալս: Մնամք սգաւոր
3 մայիս 1874 Պատր. փոխանորդ-
Խորհրդ. Պետրոս Կարապետ
յԱռաջնորդարան Հայոց

. . . Խորագիր.

Գաղափար և Եօգաւոր սովատանջ
ազգայնաց նպատակներով համար
ազգային Պատրիարքարանի որոշմամբ կազ-
մուած յանձնաժողովոյ միջոցաւ մինչև
հիմա դոյազած հանգանակութեան արդ-
եանց ցուցակը և ողորմած վեհանձնաց
անունները ի գիտութիւն և ի պարծանս
ազգայնաց, ըստ ներքոյ գրեալին հրա-
տարակելու բարեհաճելիք կը խնդրուի:

Մ. Մանուկ, Մ. Սարգիս և Մ. Ղա-	Ղը
զար Եփէնտիք Մանուկեան	3000
Պօղոս և Մկրտիչ Եփէնտիք Մուրա-	3000
եան	2500
Յարութիւն Եփ. Գաբամանեան	2500
Սենեքերիմ և Օհաննէս Եփէնտիք	2500
Մանուկեան	2500
Միսիւ Արթիւրի Ղաֆօնիէն	2500
Մ. Սէրոբէ և Մ. Սարգիս Եփ. Կիւ-	2500
պէնիկեան	2500
Մ. Ժօրժ Ֆրադարուն և ընկ.	2220
» Սամաէլ Նուս	2220
» Սիթի թընթին	2220
» Աթիւ Օլամ Զարթիկն	2220
» Բարա Կանի	2220
Անտրիա Հէր	2000
Միսիւ Բախտեմիւն	2000
Սիմոն պէյ Մաքսուտեան	2000
Յակոբ Եփէնտի Նորատունեան	2000
Պետրոս » Կիւղէնեան	2000
Բարսեղ » Նալբանեան	2000
Յովհաննէս » Կիւմիւշեան	2000
» և Մկրտիչ Եփէնտիք Ե-	2000
սայեան	1500
Միսիւ Հուն Ա' Հօստէն	1500
» Իմին և ընկ.	1500
» Կալիթի Վօկիլ	1500
» Հարենց Ֆրանչիսկեան և ընկ.	1500
Եղիա և Կարապետ Եփէնտիք Պէյ-	1250
լէրեան	1150
Բարեպաշտ ոմն	1000
Մ. Ճէլի Գօլէր և ընկ.	1000
» Ստուշի »	1000
» Ըշտիկէ Հոյմի »	1000
» Գօնըրաթ Բէթէր »	1000
Մկրտիչ Եփ. Քիւրքճիկեան	1000
Գրիգոր » Գարակէօզեան	1000
Յարութիւն » Մանուկեան	1000

Համարձուած Կիւմիւշեան	1000
Նսայի » Նսայեան Իզմիրցի	1000
Արիկ » Ունեան	1000
Յարութիւն » Սահակեան	1000
Գրիգոր » Ներսէսեան	1000
Կիւղէնի Լօղօֆէթ Եփ. Պալեօղեան	600
Մ. Թումանի »	500
» Գարօ »	500
» Ֆրանի Աթար »	500
Տօթթէօր Բետթիպեան	500
Օհաննէս Եփ. Գաբամանեան	500
Թորոս և Կարապետ Եփէնտիք Կիւ-	500
պէնիկեան	500
Օհաննէս Եփէնտի Մանուկեան Գա-	500
ղապալի	500
Ազգասէր ոմն	500
Մ. Ս. Սիրիք »	500
Յարութիւն Եփէնտի Բընանեան	500
Յովհաննէս » Աշխաւորեան	500
Մ. Հապա Նիթ Կրայմը Պէօք »	500
Կ. Բ. Եփէնտի Ստամբուլեան	500
Կարապետ Եփէնտի Ուլաշեան	400
Մ. Սալմանի »	350
Մէլիպուրեան վարժարանէն	300
Մ. Հօնիկէր »	300
Տիգրան Եփէնտի Երուսաղեմեան	300
Մաթիկ » Մախալեան	300
Հաճի Գէորգ » Տարեան	300
Կեսարացի »	300
Մինաս » Տէր Պապեան	300
Ալիպալի »	300
Յակոբ » Պարմարեան	300
Բարեպաշտ ոմն »	300
Սաեփան Եփէնտի Կամացուկեան	250
Կարապետ » Ազարեան	250
Փանոսեան վարժարանէն »	215
Տօթթէօր Սէրմիշէն Եփէնտի	200
Բարեպաշտ ոմն »	200
Յակոբ Եփէնտի Սաղըրեան	200
Յարութիւն Եփէնտի Տիւրքեան	200
Կարապետ » Խուպէսէրեան	200
Յովհաննէս » Վարդանեան	200
Յովսէփ » Աղամանեան	200
Տիգրան » Սարմեան	200
Կարապետ » Վարդանեան	400
Մեղրոն » Հարաճեան	400
Մ. Հըւ Տօրմալ և ընկ.	400
Բարեպաշտ ոմն »	400
Գէորգ Եփէնտի Էօմիւրեան	400
Բարսեղ » Կիւղէնիկեան	400
Յովհաննէս » Պէյլիկեան	400
Պետրոս » Խալէշարեան	400
Արիկ » Կիւղէնիկեան	400
Խաչիկ և Գրիգոր Եփէնտիք Կիւ-	400
պէնիկեան	400
Տէմիւրաւուրեան և Չօպանեան ընկ.	400
Յովհաննէս Եփէնտի Գեաշեանեան	400
Խրիսթափ և Փէթրաքի Եփէնտիք	400
Յակոբ և Մարգար Եփէնտիք Գա-	400
ղապետ »	400
Բալիկէօ Տիւրմալ Եփէնտի	400
Խաչիկ Եփէնտի Կիւմիւշեան	400
Գրիգոր » Բէմպէճեան	400
Նաւն » Թաշեան	400
Թուրմանեան Մեղրոն Եփէնտի	400
Մկրտիչ Եփէնտի Ուղուշեան	400
Պապիկ » Գալլընեան	400
Յովհաննէս » Քէրէսիկեան	400
Յարութիւն » Ալիպանեան	400
Նաղար և Միհրան Եփէնտիք Բը-	75
ղըրեան »	60
Մ. Գէորգ Եփէնտի Վանցի »	50
» Մինաս » Հագանի »	50
Ասատուր » Մուրմարեան »	50
Համարձուած » Էքմէճեան »	50
Կարապետ » Եվրէնեան »	50
Կրդիմ »	50
Ա. Երման և Թէսիկի Եփէնտի Թաշ-	50
տապուրուշեան »	50
Ալեքսանդր Եփէնտի Տ. Յակոբեան »	50
Բարեպաշտ ոմն »	50
Նաղար Եփէնտի Ուղուշեան Մկրտիչեան »	50
Սեղրաք » Տէմիւրեան Ալիպալի »	50
Պետրոս » Բուսեան »	50
Յակոբ » Ահարոնեան »	50
Յօհան » Արամեան »	50
Մ. Յարութիւն Եփէնտի Պալըք- »	50
ճեան Ալիպալի »	50
Յարութիւն Եփէնտի Շէքերճեան Կե-	50
սարացի »	50
Կարապետ Տիգրան և Յակոբ Եփէն- »	50
տիք Չէշեան »	50
Ազգասէր ոմն »	50
Կարապետ Խաչիկեան »	50

Երամ ճէնաղեան	50
Ազգասէր ոմն »	50
Յովսէփ Եփէնտի Նսայեան Կեսա-	25
րացի »	25
Մ. Գէորգ Գաֆուսեան »	25
Գէորգ Եփէնտի Պարտիզապեան »	25
Մկրտիչ » Պօղոսեան »	25
Ազգարիկ և Յարութիւն Եփէնտիք Պա-	25
սուրեանեան »	25
Յովհաննէս Եփէնտի Ալիպանեան »	25
Ալիպալի »	25
Սարգիս » Բարապեան »	25
Ա. Երման » »	20
Յակոբ » Քիւրքճիկեան »	20
Մարտիրոս » Խալապեան »	25
Յարութիւն » Սարաֆեան »	50

Ներքոյ գրեալները
79985
5520
74465

Յանձնաժողովի գաւառ յիշեալ հա-	
դանակութեան անուամբ և արդէն հը-	
րատարակածներն են.	
Փախաղեան Գէորգ Եփէնտի »	
Ճեռամբ »	
Յակոբ Եփէնտի Նորատունեան »	1000
Բայսեղ » Հարաճեան »	1000
Յովհաննէս և Մկրտիչ Եփէնտիք »	
Նսայեան »	1000

Յակոբեան և Կիւմիւշիկեան »	
Կան Եփէնտիներու ձեռամբ »	
Յարութիւն Եփէնտի Գալմամանեան »	2000
Եղիա » Պէյլիկեան »	520
Գուժար »	5520

Վերոյիշեալ գուժար »	74465
Մ. Տօթթէօր Բաֆայեան »	300
Տայիեան և Չրաճեան ընկերք »	200
Ֆրէնիկեան Մարութ Եփէնտի »	100

Գուժար Եփէնտեան և հինգ 75065
հազար վաթսուս և հինգ դահէ
կան, իրաց Օսմանեան 400 դը
հաշուով:

Վերոյիշեալ մէն մի լիւրները ազգա-
յին կարօտեաց ամեն մէկին կենդանու-
թեան ինչպէս որ պատճառ եղած են.
յուսով ենք որ հանդանակութեան դուրս
մնացեալ անձինք այս կէտը նկատողու-
թեան անուկով մասնակցելու անտարա-
կոյ կը բարեհաճին, որք հետզհետէ հը-
րատարակութեան բարեպաշտութիւնը
տեսնելու փախաղաք մնամք.

Ատենադպիր Ստեփանապետ
Գրիգոր Օ. Տօնիկեան Յարութիւն Գալմա-
1873 մայիս 20 մանեան

Ի Լ Ա Ն
Թօքհանէի ամիրէ իլին Ֆուա
Մէնասէ Բուժմանիւսըն ի թաւսընը
տէր Էօհաէ ի թմիշ օլաղը 1570 թօի
սարկըլըք վէ 2113 թօի մուհաֆա-
ղալըք քաղաքալը ի թա իտէմէտիք-
լէրի ճիհէթլէ տիլէրինտէն միւպայ-
եա օլունաճաղընտան վէ զիքր օլունան
սարկըլըք քաղաքըն պէհէր քըյէսի
11 վէ մուհաֆըղըք քաղաքըն պէհէր
քըյէսի 10 դուշա օլարաթթալիկէ Էօհ-
տէսինտէ օլուպ, իչպու մայիսը բու-
մինին 30 ինճի բէնչէմպիկէ կիւնի գա-
րարը գաթիսի վիլիլէճէ յիւտէն, տա-
հա աշաղը ֆիյաթլէ ի թաւսըն թա-
լիպ օլանլէրին եէվմի մէղքիւրտէ Տա-
րի Շուրայի ասքէրլիյէ կէլլէլէրի:
22 մայիս 1874 Պապը Սէրասքէրի

Թօքլանէյի ամիրէյէ բուղու մի օ-
լան 7500 քանթար ֆօք քէօմիւրի ին-
կիլթէրտէ, Եօքըշայրտէ Լօմօր
Ֆապրիգաւրըն պիլիլինտէ տէրէճէտէ
մալի օլմազ վէ ֆապրիգալի մէղքիւ-
րըն պիլիլինտէ տէրէճէ մալի օլուղը-
նա տայիլ շէհատէթնամէ Բարաք դը-
լընմազ շարթիլ իլլէ միւնաքաւայէ դօ-
նըրաճաղը մուգատտէմէ իլան օլու-
նան քօք քէօմիւրիլին պէհէր քան-
թարը 40 դուշէ թալիպիլ իւղէրինտէ

ጸሐፊዎች ከፊት 2 ተፈትጦ-ጎቶች

Կ. ՊՕԼԻՅ ԶԻՆԻԼԻ ԽԱՆ

ከጠቅላይ ሚኒስትር ጋር ሲገናኙ ለሀገሪቱ ስሜን ምዕራባዊው ክፍል ሲገናኙ

2 15 Իւսկիւտար, Գուդկուճճուք, Պէյլէրպէյի Չէնկէլքէժ քա-
նիքէժ, Գանտիլ, Հիսար, Գանլըճ, Րիֆաթ փաշա մահալ-
լէսի, Բաշապաղչէ, Պէյքօջ, Պէյլիւքտէրէ:

12 12 5

Վ. Ռ. ՍՈՒՍՆ ԱՏՐԻԱՆ Մ. ԳԻԻՆ

ԱՂԵՅԱՆՆԵՐԻ ՆԵՐՍԵՍԻԱՆԻ Ի ՊԱՀՃԻ ԳԱՐՈՒ

ԱՂԵՅԱՆՆԵՐԻ ՆԵՐՍԵՍԻԱՆԻ Ի ՊԱՀՃԻ ԳԱՐՈՒ